

ՀԱՐԿԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

➤ Ձեռնարկատիրական գործունեություն

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության գրանցման գործընթացը կարգավորվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, իսկ հաշվառման գործընթացը՝ «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքով:

Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն կարող են ծավալել պետական գրանցում ստանալուց և հարկային մարմնում հաշվառվելուց հետո: Իրավաբանական անձը համարվում է հիմնադրված իր գրանցման պահից:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրվում է պետական գրանցման վկայական, որում ներառված տվյալների փոփոխությունները կատարվում են լրացուցիչ հավելվածների տեսքով:

Գրանցումն իրականացվում է Պետական ռեգիստրի տարածքային բաժնի կողմից, և կարող է տեղ կազմակերպությունների համար մինչև 5 օր և անհատ ձեռնարկատերերի համար՝ 2 օր:

Օտարերկրյա ընկերությունները կարող են Հայաստանում գործունեություն իրականացնել՝ ստեղծելով և գրանցելով օտարերկրյա իրավաբանական անձի ներկայացուցչություն կամ մասնաճյուղ: Ներկայացուցչությունները և մասնաճյուղերը իրավաբանական անձեր չեն, գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա՝ օրենքով սահմանված շրջանակներում, և ներկայացնում են իրավաբանական անձի շահերն ու մասնակցում դրանց պաշտպանությանը, իրականացնում նրա գործառույթները: Վերջիններս պետք է հաշվառման կանգնեն հարկային մարմնում՝ ստանալով հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ):

Հարկ վճարողները եւ հարկային գործակալները հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, տեղեկությունները կամ այլ փաստաթղթերը հարկային մարմին կարող են ներկայացնել անձամբ, փոստով կամ էլեկտրոնային եղանակով:

➤ Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են՝

- հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է «Հարկերի մասին» ՀՀ օրենքից և առանձին հարկատեսակների մասին օրենքներից.
- ՀՀ կառավարության որոշումներով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում.
- ՀՀ հարկային տեսչության, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

➤ **«Հարկերի մասին» ՀՀ օրենք**

«Հարկերի մասին» օրենքով սահմանվում են հարկի հասկացությունը և հարկերի տեսակները, հարկային վեճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում են հարկերի մասին ՀՀ օրենսդրությունը և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը:

Եթե ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարրընթերցումներ, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են հարկ վճարողի օգտին:

Հայաստանում գործող հարկերն են՝

- Շահութահարկ
- Եկամտահարկ
- Ավելացված արժեքի հարկ
- Ակցիզային հարկ
- Գույքահարկ
- Հողի հարկ

Նշված հարկերին օրենքով կարող են փոխարինել՝

- Հաստատագրված վճարներ
- Արտոնագրային վճարներ

➤ **ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ**

Շահութահարկ վճարողները և հարկման օբյեկտը

Շահութահարկ վճարում են (հարկատու են) ՀՀ *ռեզիդենտները* և *ոչ ռեզիդենտները*:

Հարկվող շահույթ = Համախառն եկամուտ - Նվազեցումներ > 0

Համախառն եկամուտը՝ հաշվետու տարում բոլոր եկամուտների հանրագումարն է (անկախ դրանց ստացման աղբյուրներից):

Ռեզիդենտների համար *հարկվող օբյեկտ* է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող *հարկվող շահույթը*:

Ոչ ռեզիդենտների համար *հարկվող օբյեկտ* է համարվում *հայաստանյան* աղբյուրներից ստացվող *հարկվող շահույթը*:

Հարկային տարին դա օրացույցային տարին է:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած *շահաբաժինների գումարի չափով*:

Դրույքաչափ

Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է *20%* դրույքաչափով:

Ռեզիդենտների կողմից ստացած շահաբաժինները չեն հարկվում: Ոչ ռեզիդենտների կողմից ստացած շահաբաժինները ենթակա են հարկման *10%* դրույքաչափով, բացառությամբ Համահայկական բանկից ստացված շահաբաժինների:

Եկամուտների թվին են դասվում մասնավորապես՝

- ապրանքների, արտադրանքի, ծառայությունների իրացումից ստացվող հասույթը.
- հիմնական միջոցների եւ այլ ակտիվների իրացումից ստացվող հասույթը
- փոխառության դիմաց ստացվող տոկոսները եւ այլ հատուցում
- վարձակալության դիմաց ստացվող վճարները եւ այլ հատուցում
- շահաբաժինները
- ապահովագրական հատուցումները
- և այլն:

Ծախսերի թվին են դասվում մասնավորապես՝

- նյութական ծախսերը.
- աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումները.
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները.
- ամորտիզացիոն մասհանումները .
- ապահովագրական վճարները.
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը եւ այլ պարտադիր վճարները.
- վարկերի եւ այլ փոխառությունների տոկոսները.
- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների եւ այլ բանկային ծառայությունների համար վճարները.
- գովազդային ծախսերը.
- ներկայացուցչական ծախսերը.
- գործուղման ծախսերը.
- «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կազմակերպությունների կողմից ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին կատարվող պարտադիր վճարները:

- ՀՀ տարածքից դուրս գովազդի ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի 3 տոկոսից կամ հաշվետու տարվա ընթացքում հարկատուի կողմից ՀՀ տարածքից արտահանված ապրանքների և ծառայությունների արժեքի 20տոկոսից ոչ ավելի չափով.
- ՀՀ տարածքից դուրս կադրերի պատրաստման ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի 4 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի յուրաքանչյուր աշխատողի համար 3 մլն. դրամը:
- ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի 5 տոկոսը չգերազանցող գումարի չափով, ընդ որում, յուրաքանչյուր աշխատողի համար 1 օրացուցային օրվա կտրվածքով ոչ ավելի, քան 25 000 դրամը.
- ներկայացուցչական ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի 0.5 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի քան 5 մլն. դրամը.
- ՀՀ տարածքից դուրս մարքեթինգի ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի 2 տոկոսը կամ հաշվետու տարվա ընթացքում հարկատուի կողմից արտահանված ապրանքների և ծառայությունների արժեքի 15 տոկոսը չգերազանցող գումարներից կամ հաշվետու տարվա ընթացքում հարկատուի կողմից ներմուծված ապրանքների արժեքի 5 տոկոսը չգերազանցող գումարներից առավելագույնի չափով:

Նախորդ տարիներին առաջացած հարկային վնասը (բացառությամբ՝ կազմակերպությունների միացման, միաձուլման և վերակազմավորման ձևով վերակազմակերպման դեպքերի), որը նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ, փոխանցվում է հարկային վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ: Նշվածը վերաբերվում է միայն ՀՀ ռեզիդենտներին:

Ամորտիզացիոն մասհանումներ

Հիմնական միջոցների խմբերը	Ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ(տարի)
ա) շենքերի, շինությունների եւ փոխանցող հարմարանքների համար	20 տարի
բ) հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների,առողջարանների, կրթական եւ ուսումնական հաստատությունների շենքերի եւ շինությունների համար	10 տարի
գ) չնշված հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար	3 տարի
դ) հաշվողական եւ համակարգչային տեխնիկայի համար	1 տարի
ե) այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների եւ հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների	5 տարի

համար	
-------	--

Մինչև *50 հազար* դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է *մեկ տարի*:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է հարկատուն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է *10 տարի*, սակայն ոչ ավելի հարկատուի գործունեության ժամկետից:

Շահութահարկի վճարումներ

Շահութահարկ վճարողները իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով ներկայացնում են շահութահարկի հաշվարկներ, ինչպես նաև հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ՝ մինչև *հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը*:

Հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա *ապրիլի 25-ը ներառյալ*:

Շահութահարկի կանխավճարներ

Կանխավճարների մուծումները կատարվում են *յուրաքանչյուր ամիս*, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի *1/16-ի չափով*՝ տվյալ ամսվա 25-ից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

Նվազագույն շահութահարկի ամսական գումարները հաշվարկվում են նախորդ ամսվա ընթացքում Հայաստանում և նրա սահմաններից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) *1%-ի չափով*:

Նոր հիմնադրված հարկատուն կարող է շահութահարկի կանխավճարներ չկատարել մինչև հաջորդ տարվա *ապրիլի 25-ը*՝ այդ մասին նախօրոք հայտնելով հարկային տեսչության մարմնին:

Այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել, կամ որի նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել *500 հազար* դրամը, կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի *կանխավճարներ չկատարել*:

Ոչ ռեզիդենտը հաշվետու տարվան հաջորդող *ապրիլի 15-ից ոչ ուշ* հարկային մարմին է ներկայացնում տարեկան եկամուտների մասին *հայտարարագիր*, ինչպես նաև կամայական (իր կողմից որոշված) ձեռով հաշվետվություն իր գործունեության

մասին: Հայտարարագրի մեջ ներառվում են հայաստանյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները:

Եթե *ստորաբաժանման միջոցով* գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է *2 մլն դրամը*, ապա ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում՝ *կիսամյակը մեկ*, կատարում է շահութահարկի կանխավճարների մուծումներ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի *մեկ քառորդի չափով*, հավասար բաժիններով, մինչև հաշվետու տարվա *հունիսի 1-ը եւ դեկտեմբերի 31-ը*։

➤ ԵԿԱՍՏԱՀԱՐԿ

Եկամտահարկ վճարողները

Եկամտահարկը ֆիզիկական անձանց եկամուտներից վճարվող ուղղակի հարկ է, որը վճարում են ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ *ֆիզիկական անձինք*:

Ռեզիդենտ է համարվում, այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ *183 օր և ավելի*: Այն ֆիզիկական անձը, ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, կամ որը գտնվելով ՀՀ-ում պետական ծառայության մեջ՝ ժամանակավորապես աշխատում է ՀՀ տարածքից դուրս, համարվում է ռեզիդենտ: Ոչ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չի բավարարում ռեզիդենտ ճանաչվելու համար սահմանված պայմաններին:

Հարկվող եկամտի որոշումը

Եկամտահարկով *հարկվող օբյեկտ* է համարվում հարկվող եկամուտը, որն իրենից ներկայացնում է հարկատուի համախառն եկամտի և նվազեցումների (նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ) դրական տարբերությունը:

$$\text{Հարկվող եկամուտ} = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0$$

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Համախառն եկամտի տեսակներից են.

- աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,
- մրցույթների դրամական և իրային շահումները,
- նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- վարձակալության դիմաց ստացվող վճարները(վարձավճարները),
- քաղաքացիաիրավական այլ պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները,
- տոկոսները, ռոյալթին,

- ձեռնարկատիրական գործունեության իրականացումից ստացված եկամուտները
- և այլն:

Համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ

Հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են՝

- զինծառայողների եւ դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները, ինչպես նաև փրկարարական ծառայության ծառայողների ծառայության հետ կապված եկամուտները:
- ժառանգության եւ նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը եւ դրամական միջոցները.
- ոչ առետրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական եւ բնամթերային ձեռով ցույց տրվող օգնության գումարները.
- անհատույց ստացված՝ օրենքով սահմանված կարգով շնորհի համարվող միջոցները.
- արժեթղթերից ստացված եկամուտը.
- ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հարկային վարչարարության օժանդակության նպատակով անցկացվող վիճակահանության արդյունքում տրամադրվող պարգևավճարները և բոնուսները:
- և այլն:

Եկամուտ չեն համարվում և համախառն եկամտի մեջ չեն ներառվում՝ պետական նպաստները՝ (բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի), բոլոր տեսակի կենսաթոշակները, զոհված զինծառայողի ընտանիքի անդամին և հաշմանդամ դարձած զինծառայողին տրվող միանվագ վճարները, ալիմենտները, արյուն և կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացված գումարները:

Դրույքաչափ

- *Հարկային գործակալը* ամսական եկամտահարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 80.000 դրամ	Հարկվող եկամտի <i>10 տոկոսը</i>
80.000 դրամից ավելի	8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի <i>20 տոկոսը</i>

- Հարկային գործակալի միջոցով *չհարկված* տարեկան եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 960.000 դրամ	Հարկվող եկամտի <i>10 տոկոսը</i>
960.000 դրամից ավելի	96.000 դրամին գումարած 960.000 դրամը գերազանցող գումարի <i>20 տոկոսը</i>

- Ռոյալթիների, տոկոսների և գույքը վարձակալության տալու եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է *10%* դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները:

Համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 30.000 դրամի չափով:

Տարեկան հայտարարագրի արդյունքներով հարկատուի՝ բյուջե ավել վճարած հարկի գումարները ենթակա են վերադարձման:

Կանխավճարները և նվազագույն եկամտահարկի վճարումները

Տարվա ընթացքում անհատ ձեռնարկատերը կատարում է եկամտահարկի եռամսյակային վճարումներ՝ եկամտահարկի կանխավճարի և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի առավելագույնի չափով: Եկամտահարկի եռամսյակային գումարները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա *ամսվա 15-ից ոչ ուշ*:

Եկամտահարկի կանխավճարների գումարը որոշվում է նախորդ տարվա ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարի 1/6-րդ չափով, եթե նախորդ տարվա եկամտահարկի գումարը գերազանցել է 500,0 հազ. դրամը:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ եռամսյակի ընթացքում Հայաստանում և նրա սահմաններից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (առանց անուղղակի հարկերի) 1%-ի չափով:

➤ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ

Սոցիալական վճարները ապահովադիրների կողմից պարտադիր կարգով ՀՀ պետական բյուջե վճարվող միջոցներ են: Սոցիալական վճարումներ են կատարում գործատուները, վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերեր և նոտարները:

Հայաստանում ձեռնարկատիրական և այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև նրանց վարձու աշխատանքն օգտագործող գործատուները՝ նրանց մասով ազատվում են սոցիալական վճարումների կատարման պարտականությունից:

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական եւ այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա իրավաբանական անձինք, դրանց կողմից ստեղծված կազմակերպությունները, օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք իրենց մոտ աշխատանք կատարող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սոցիալական վճարները կատարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Գործատուներն աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների (մատուցվող ծառայությունների) դիմաց յուրաքանչյուր աշխատողի համար սոցիալական վճարները կատարում են հետևյալ չափերով:

Գործատուի կողմից վճարվող վճարը	Սոցիալական վճարի չափը
ԱՎՈՒՄ (ամսական ՀՀ դրամ) մինչև 20,000	7,000 դրամ
20,000 դրամից մինչև 100,000 դրամ	7,000 դրամ գումարած 20,000 դրամը գերազանցող գումարի 15%-ը
100,000 դրամից ավելի	19,000 դրամ գումարած 100,000 դրամը գերազանցող գումարի 5%-ը

Վարձու աշխատողները սոցիալական վճարումներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 %-ի չափով, որոնց պահումները կատարում և լիազորված մարմին են փոխանցում գործատուները:

Բացառությամբ ԱԱՀ վճարող չհամարվողների և եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների, անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումներ կատարում են ներոնշյալ դրույքաչափերով:

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 1.200.000 դրամ	15 տոկոս, բայց ոչ պակաս 60 հազար դրամից
1.200.000 դրամից ավելի	180.000 դրամ գումարած 1.200.000 դրամը գերազանցող գումարի 5%-ը

ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումներ կատարում են սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3% դրույքաչափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից:

Անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը, վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամ: Վերջիններս մինչև օրացուցային տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը վճարում է նախորդ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարի և վճարած նվազագույն սոցիալական վճարի տարբերությունը և հարկային մարմին է ներկայացնում տարեկան եկամուտների մասին հայտարարագիր:

Մինչև 5 վարձու աշխատող ունեցող գործատուները ներկայացնում են պարտադիր սոցիալական վճարումների եռամսյակային հաշվետվություն՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ 5-ից ավել վարձու աշխատող ունեցող գործատուները՝ ամսական հաշվետվություն մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը: Հաշվետվությունները ներկայացվում են պարզեցված ընթացակարգով:

➤ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ (ԱԱՀ)

Ավելացված արժեքի հարկը անուղղակի հարկ է, որը վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Հայաստանում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ են՝

- ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը,
- անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը,
- «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԱԱՀ-ի հարկման օբյեկտ չհամարվող գործարքներն են, մասնավորապես՝

- պետական տուրքի գումարը.
- Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա՝ հարկ վճարողների կողմից՝
 - ապրանքների մատակարարման եւ ծառայությունների մատուցման անհատույց գործարքները,
 - մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության եւ ստացված հատուցման տարբերությունը.
- իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման (այդ թվում սեփականաշնորհման), ինչպես նաեւ ապապետականացման գործարքները.
- պետական ձեռնարկությունների հիման վրա ստեղծված վարձակալական ձեռնարկությունների վարձակալական գործարքները.

- տիրագործի, ժառանգության իրավունքով պետությանն անցած արժեքների, գանձերի եւ պետության կողմից գնված արժեքների իրացման շրջանառությունը.
- բռնագրավման կամ նվիրատվության ձևով գույքի կամ գույքային իրավունքի օտարումը պետությանը.
- ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը.
- Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության մեկնող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը.
- և այլն:

ԱԱՀ վճարողներ են համարվում՝

օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, բացառությամբ այն անձանց, որոնց կողմից նախօրոք օրացույցային տարում իրականացված՝ օրենքով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը (ԱԱՀ- շեմը): Տվյալ օրացույցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58.35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58.35 միլիոն դրամը գերազանցող մասով: Օրենքով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում և անձինք ԱԱՀ վճարող են համարում անկախ՝ ԱԱՀ-ի շեմը գերազանցված լինելու հանգամանքից

Ստորև նշված դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում՝

- ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց *արժեքը* դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում.
- ՀՀ ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող *մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը* :

ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հաշվեգրման եղանակով:

Դրույքաչափ

20% - ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 % դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է **16,67 %** հաշվարկային դրույքաչափով:

0% - օրենքով սահմանված գործարքների (0-ական դրույքաչափով հարկվող գործարքների) շրջանառության նկատմամբ:

ԱԱՀ-ի հաշվարկման կարգը

ԱԱՀ վճարողները հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշելու նպատակով այդ հաշվետու

ժամանակաշրջանում իրականացրած գործարքների մասով հաշարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցում պակասեցնում են՝

ա) արտադրական և առևտրային նպատակներով ձեռք բերված այն ապրանքների և ստացած այն ծառայությունների մասով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները

- որոնք ձեռք են բերվել բանկային փոխանցմամբ,
- որոնց ձեռք են բերվել կանխիկ վճարմամբ, սակայն դրանց արժեքը չի գերազանցում յուրաքանչյուր միանվագ գործարքի չափով 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար 3 միլիոն դրամը,

բ) ներմուծված ապրանքների մասով մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարը:

Հաշվարկված այդ տարբերությունն էլ, որպես կանոն, վճարվում է պետական բյուջե:

ԱԱՀ վճարվող համարվող անձը հարկային մարմինն է ներկայացնում տեղեկություն մատակարարներից ստացված և իր կողմից դուրս գրված (100 000 ՀՀ դրամից ավելի արժեքով) հաշիվների վերաբերյալ:

Վճարումներ

ՀՀ ապրանքների *ներմուծման դեպքում* դրանց համար ԱԱՀ վճարվում է ներմուծման պահին, կամ սահմանված դեպքերում՝ *ներմուծման օրվանից տասը օրվա ընթացքում*: Եթե նախապես հայտարարված մաքսային ռեժիմը (որի համաձայն մաքսային սահմանով բացթողման ժամանակ ապրանքներից ԱԱՀ չի գանձվում) փոխարինվում է *ազատ շրջանառության համար բացթողման (ներմուծման) ռեժիմով*, ապա վճարողները (կամ մաքսային օրենսդրությամբ սահմանված վճարումների համար պատասխանատու այլ անձինք) պարտավոր են ԱԱՀ-ի չգանձված գումարները վճարել ներմուծման մաքսային ռեժիմով ապրանքների վերահայտարարագրման կամ այդ մասին հայտնի դառնալու օրվանից հետո *տասնօրյա ժամկետում*:

Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրական գործընթացում օգտագործվող օրենքով նախատեսված ապրանքներ (այդ թվում՝ սարքավորումներ, հումք) ներմուծելիս ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգվում է՝

- 1 տարի ժամկետով՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի մինչև 70 մլն. դրամ լինելու դեպքում,
- 2 տարի ժամկետով՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 70-ից 300 մլն. դրամ լինելու դեպքում,
- 3 տարի ժամկետով՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 300 մլն. դրամից ավելի լինելու դեպքում:

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 մլն. դրամը գերազանցող մաքսային արժեքով ցանկացած ապրանքներ ներմուծելիս ևս ԱԱՀ-ի վճարումը կարող է հետաձգվել 3 տարի ժամկետով:

ՀՀ տարածքում իրականացրած գործարքների համար ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան, որպես կանոն, համարվում է յուրաքանչյուր եռամսյակը:

Այն անձանց համար, որոնց հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

Հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին *հաջորդող ամսվա 20-ը ներառյալ*:

ԱԱՀ-ի արտոնություններ և գրոյական դրույքաչափով հարկում

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը նշված գործարքների իրացման հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումն է:

Ջրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման համար ձեռք բերված ապրանքների եւ մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման):

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառվում է, մասնավորապես՝

1) ՀՀ մաքսային սահմանից դուրս «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, ինչպես նաեւ միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի եւ ուղեւորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ:

Օտարերկրյա անձանց կողմից հանրապետությունում ձեռք բերված ապրանքներն արտահանելիս դրանց համար հանրապետության տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները վերադարձվում են նրանց:

2) այն ծառայությունների (այդ թվում՝ գործակալական, միջնորդական) հարկվող շրջանառության նկատմամբ, որոնք անմիջականորեն կապված են եւ ապահովում են նախորդ կետում նշված ծառայությունների մատուցումը,

3) «Ժամանակավոր ներմուծում վերաձեւակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված՝ «վերարտահանում» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ,

4) այն ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց մատուցման վայրը, չի գտնվում ՀՀ տարածքում,

5) հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ:

Օրենքով նախատեսված է որոշ գործարքների նկատմամբ կիրառել ԱԱՀ-ից ազատման արտոնություն: ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:

ԱԱՀ-ից ազատված գործարքների իրականացման համար ձեռք բերված ապրանքների եւ մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային առանձնացված ԱԱՀ-ի գումարները չեն հաշվանցում և ձեւակերպվում են որպես ծախս:

ԱԱՀ-ից ազատվում են, մասնավորապես՝ հետևյալ գործարքները եւ գործառնությունները՝

- 1) հանրակրթական դպրոցները, պրոֆտեխնիկական ուսումնարանները, որակավորման եւ վերաորակավորման միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով.
- 2) գիտահետազոտական աշխատանքները.
- 3) թերթերի եւ ամսագրերի իրացումը.
- 4) ապահովագրական եւ վերաապահովագրական գործառնությունները, ներառյալ՝ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդների եւ գործակալների կողմից մատուցվող ծառայությունները.
- 5) կենսաթոշակային ապահովման գործառնությունները, ներառյալ դրանց հետ կապված միջնորդների եւ գործակալների կողմից մատուցվող ծառայությունները.
- 6) վարկերի (փոխառությունների) տրամադրումը, այդ թվում՝ պարտքերը կամ առետրային գործարքների ֆինանսավորումը, ֆակտորինգային այլ գործառնությունները.
- 7) արժեթղթերի թողարկումը, տեղաբաշխումը, գնումը, վաճառքը, այդ թվում՝ վերավաճառելու նպատակով կամ պայմանով գնումը, ի պահ ընդունումը եւ հաշվառումը.
- 8) կանխիկ տրամադրման ծառայությունները.
- 9) հասարակական (այդ թվում՝ բարեգործական) եւ կրոնական կազմակերպությունների կողմից անհատույց սպառումը.
- 10) ՀՀ տարածք ներմուծվող մշակութային արժեքները:

➤ **ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ**

Համախառն եկամտի հարկում

Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: Հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարված համախառն եկամտից *շահութահարկի* պահումը (գանձումը) կատարվում է հետևյալ չափերով՝

Եկամտի տեսակը	Շահութահարկի չափը տոկոսներով
ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ եւ փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5

<p>շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ, գույքի արժեքի հավելված եւ այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից), ինչպես նաեւ այլ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ</p>	10
---	----

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց *եկամուտներ* վճարելիս հարկային գործակալները հարկը պահում (գանձում) են եկամտի վճարման աղբյուրի մոտ հետևյալ չափերով`

Եկամտի տեսակը`	Չափը (չափը)
<p>ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումներ եւ փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ</p>	5
<p>շահաբաժիններ, ռոյալթիներ, տոկոսներ, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ, գույքի արժեքի հավելված եւ այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից), ինչպես նաեւ այլ (այդ թվում` ձեռնարկատիրական գործունեությունից ստացված)` հայաստանյան աղբյուրներից ստացված պասիվ եկամուտներ</p>	10

➤ **ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿ**

Ակցիզային հարկը ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Դրույքաչափ

Ակցիզային հարկը ՀՀ-ում արտադրվող ապրանքների համար վճարվում է հետևյալ դրույքաչափերով`

Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)
2203	գարեջուր	1 լիտր	70
2204	խաղողի եվ այլ գինիներ	բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի)	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ
2205	վերմուտ եւ խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական եւ արոմատիկ էքստրակտներ	1 լիտր	500
2206	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	1 լիտր	180
2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	600
2208	սպիրտային խմիչքներ	բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի)	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 380 դրամ
2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1,500

2208 ծածկագրում ներառված՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությանը ապրանքատեսակների համար սպիրտայնության՝ 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7.5 դրամով (բացառությամբ խաղողի գինեւնյութից ստացված կոնյակի սպիրտի), իսկ մինչեւ 9 տոկոս, ներառյալ սպիրտայնություն պարունակող խմիչքների համար սահմանվում է յուրաքանչյուր լիտրի համար՝ 100 դրամ:

2207 և 2208 ապրանքախմբերի ծածկագրերին դասվող ապրանքների օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային

հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3500 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

Վճարումներ

ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման պահին, կամ սահմանված դեպքերում ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 15-ը:

➤ **ԳՈՒՅՔԱՀԱՐԿ**

Գույքահարկով հարկվող օբյեկտը և հարկման բազան

Գույքահարկ վճարող են համարվում ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց ՀՀ տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների եւ հիմնարկների:

Գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում.

1. Շենքերը եւ շինությունները
2. Փոխադրամիջոցները

Դրույքաչափ

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

- 1) հասարակական եւ արտադրական նշանակության շինությունների համար՝ հարկման բազայի 0.3 տոկոսը.
- 2) հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար՝

հարկման բազան	հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամը ներառյալ	հարկման բազայի 0 տոկոսը

3 մլն դրամից մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն դրամը ներառյալ	7.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10 մլն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը
20 մլն դրամից մինչև 30 մլն դրամը ներառյալ	27.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն դրամը ներառյալ	67.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1.0 տոկոսը

3) ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինության համար՝ հարկման բազայի 0,2 տոկոսը:

Փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
- 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,
- 251 եւ ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ.

2) 10 եւ ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների եւ բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
- 201 եւ ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

2. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:

3. Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

4. Մինչեւ երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով:

Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

5. Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում եւ չի վճարվում:

6. Վերոնշյալ փոխադրամիջոցների հարկման բազան կիրվատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է՝ համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

Վճարումներ

Կազմակերպությունները գույքահարկի հաշվարկված գումարները բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչեւ տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ: Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը բյուջե են վճարում մինչեւ հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

➤ **ՀՈՂԻ ՀԱՐԿ**

Վճարողներ

Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված հողերի համար հարկը գանձվում է վարձատուից:

Հարկման բազա և դրույքաչափ

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ եւ այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամտի 15 % չափով:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է հետևյալ չափերով՝

ա) արդյունաբերության (ներառյալ հանքավայրերը եւ արտադրական գործունեությունից խախտված տարածքները), տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաեւ ջրային ֆոնդի հողերի համար հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանցման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով՝

- բնակավայրերի ներսում 1 տոկոս.
- բնակավայրերից դուրս՝ 0,5 տոկոս.

Հողի հարկից ազատվում են՝

ա) բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաեւ պետական արգելանոցները եւ արգելավայրերը, ազգային եւ ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները եւ պատմամշակութային նշանակության հողերը, բացառությամբ վարձակալության եւ ծառայողական օգտագործման տրված հողերի.

բ) հողային ռեֆորմի եւ սեփականաշնորհման ընթացքում ձեւավորված գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները՝ հողի սեփականության իրավունքի ձեռքբերման ամսվանից սկսած երկու տարվա ընթացքում.

գ) հողի այն սեփականատերերը, մշտական եւ ժամանակավոր օգտագործողները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկից ազատվելու պայմանով տրամադրվել են հողեր՝ այդ ժամկետի ընթացքում.

դ) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ եւ այլն).

ե) մասնագիտական տեխնիկական ուսումնարանների (պրոֆտեխնուսումնարանների) եւ դպրոցների կից ուսումնարատադրական եւ փորձարարական հողամասերը.

զ) նոր հիմնված եւ երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչեւ տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր տորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում)՝ դրանց տարածքը 0,1 հեկտար եւ ավելի լինելու դեպքում.

է) պետական անտառային ֆոնդի հողերը, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության վարձակալության տրված հողերի.

ը) փոստային կապի ազգային օպերատորը:

Հողի հարկից 50 % չափով ազատվում են՝

ա) գյուղատնտեսական եւ անտառատնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկների եւ ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային,

տոհմային եւ սորտափորձարկման ձեռնարկությունները, կայանները եւ հենակետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական եւ ուսումնական, ինչպես նաեւ գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով:

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտահարկի վճարումից ազատված քաղաքացիները՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերի համար:

➤ **ՓՈՔԲ ԲԻԶՆԵՍԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

Փոքր և միջին ձեռնարկատիրության համար հարկային բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով ներդրվել են կազմակերպությունների համար շահութահարկի, անհատ ձեռնարկատերերի համար *եկամտահարկի պարզեցված հաշվարկման մեխանիզմներ*, որոնցից կարող են օգտվել փոքր բիզնեսի ներկայացուցիչները, եթե նախորդ օրացուցային տարում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (այդ թվում՝ ԱԱՀ-ին փոխարինող հաստատագրված վճարներով հարկվող կտ համարվող գործունեության տեսակների իրականացումից ստացման ենթակա հասույթը)՝ չի գերազանցել *58,35 մլն. դրամը*:

- Մինչև շեմի գերազանցման պահը՝ փոքր բիզնեսի ներկայացուցիչները չեն համարվում ԱԱՀ վճարող: Սակայն, իրենց հայեցողությամբ, կարող են համարվել ԱԱՀ վճարող, այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնելով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին: Այդ դեպքում ԱԱՀ վճարող կհամարվեն հայտարարությունում նշված օրվանից սկսած, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրը:
- Ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերը ներկայացնում է եկամուտների *պարզեցված հաշվարկ*՝ մինչև այդ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ): Մինչև հարկային տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու և Հայաստանից մեկնելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր է եկամտահարկի տարեկան հաշվարկը ներկայացնել ոչ ուշ, քան մեկնելուց 1 ամիս առաջ և հաշվարկված եկամտահարկի գումարը վճարել պետական բյուջե՝ վճարման վերջնահաշվարկը կատարելուց հետո 5-օրյա ժամկետում:
- ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը պարտադիր սոցիալական ապահովության վճարումները կատարում են պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3% դրույքաչափով (բայց ոչ պակաս, քան 60,0 հազ. դրամը):
- Մինչև 5 վարձու աշխատող ունեցող գործատուները ներկայացնում են պարտադիր սոցիալական վճարումների եռամսյակային հաշվետվություն՝ պարզեցված ընթացակարգով:
- Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց համար օրենքով սահմանված կարգով պարտադիր է ՀԳՄ-ների կիրառումը, ԱԱՀ

վճարող չհամարվելու ժամանահակահատվածում առաքման և հասույթի գրքեր չեն վարում:

- Այն անհատ ձեռնարկատերը, որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող, կարող է եկամտահարկի տարեկան հաշվարկը ներկայացնելուց հետո եկամտահարկի կանխավճարներ չկատարել:
- Եկամուտների պարզեցված հաշվարկ կարող է չներկայացնել այն անհատ ձեռնարկատերը, որը հարկային տարվա ընթացքում ստացել է բացառապես նվազեցվող եկամուտներ (այդ թվում՝ գյուղատնտեսությունից):

ՀԱՐԿՍԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄՆԵՐ

➤ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաստատագրված վճարը հարկ վճարողների կողմից իրականացվող որոշակի գործունեության համար պետական բյուջե վճարվող շահութահարկին (եկամտահարկին) կամ ավելացված արժեքի հարկին (կամ երկու հարկատեսակների միաժամանակ) փոխարինող պարտադիր և անհատույց վճար է: Հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով հաշվարկվում և վճարվում է հաստատագրված վճար՝ անկախ գործունեության արդյունքներից:

Հայաստանի Հանրապետությունում հաստատագրված վճար սահմանված է՝

- գործունեության որոշ տեսակների համար,
- ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար,
- ՀՀ ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի համար:

Հարկվող գործունեության տեսակները

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակներն են.

- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը.
- ավտոտրանսպորտային գործունեությունը.
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը.
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը.
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեությունը.
- ավտոկանգառների գործունեությունը.
- արդյունագործական ձկնորսության գործունեությունը.
- խաղատների գործունեության կազմակերպումը.
- շահումով խաղային ավտոմատների շահագործումը.
- ինտերնետ շահումով խաղերի կազմակերպումը.
- համակարգչային խաղերի կազմակերպումը.
- վիճակախաղերի կազմակերպումը.
- բաղնիքների և ցնցողարանների կազմակերպումը.
- ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը.
- բիլիարդ խաղի կազմակերպումը:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով վճարողների համար կասեցվում են «Ավելացված արժեքի հարկի մասին», «Շահութահարկի մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված արտոնությունները:

Հաստատագրված վճար վճարողները

Հաստատագրված վճար վճարողներ են համարվում վերոնշյալ գործունեությունն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեությունն իրականացնողները այդ գործունեության մասով չեն կարող համարվել ընդհանուր կարգով հարկ վճարող:

Հաշվարկման կարգը և վճարման ժամկետները

Հաստատագրված վճարը, որպես կանոն, հաշվարկվում է *ելակետային տվյալների, ուղղիչ գործակիցների որոշակի թվի (պատիկ թիվ) արտադրյալի չափով:*

Գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված են տարբեր ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ:

Գործունեության յուրաքանչյուր տեսակի համար, բացառությամբ վիճակախաղի, հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՎ} = \text{ՊԱՏԻԿ ԹԻՎ X ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ X ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ}$$

Վիճակախաղերի կազմակերպման դեպքում հաստատագրված վճարի չափը որոշվում է իրացված վիճակախաղերի տոմսերի ընդհանուր արժեքի 25%-ի չափով:

Հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար:

Հաստատագրված վճար վճարողը ինքն է հաշվարկում հաստատագրված վճարի չափը: Բոլոր գործունեության տեսակների գծով հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան *հաջորդող ամսվա 15-ր ներառյալ:*

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ, ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Մինչև գործունեությունն իրականացնելը հաստատագրված վճար վճարողը իր հաշվառման վայրի հարկային տեսչությունն ներկայացնում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ:

Հայտարարությունը ներկայացվում է *երկու* օրինակից: Հարկային տեսչությունը կնքում և գրանցում է հայտարարությունը, և մեկ օրինակը վերադարձնում վճարողին: Վճարողը Հայտարարության իր օրինակը փակցնում է գործունեության իրականացման վայրում՝ տեսանելի տեղում:

Հաստատագրված վճար վճարողները հարկային մարմին ներկայացնում են վերոնշյալ հայտարարությունը՝ անկախ նրանից գերազանցել են սահմանային չափը, թե ոչ: Հայտարարությունները ներկայացվում են համապատասխանաբար ամսվա կամ եռամսյակի արդյունքներով՝ *մինչև տվյալ ամսվան կամ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ*:

Հայտարարությունները ներկայացվում են հարկային տեսչություն

- ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից՝ *յուրաքանչյուր եռամսյակի* համար,
- վիճակախաղի կազմակերպիչների կողմից՝ *յուրաքանչյուր ամսվա* համար,
- տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի և ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից՝ *յուրաքանչյուր ամսվա* համար,
- գործունեության մյուս տեսակներ իրականացնողների կողմից՝ *յուրաքանչյուր տարվա հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում*:

Հաստատագրված վճար վճարողները *հայտարարությունը* ներկայացնում են *նախապես*՝ մինչև տվյալ ժամանակաշրջանի սկիզբը: Այս մասով բացառություն է արված *վիճակախաղի կազմակերպիչների* համար, որոնք հայտարարությունը ներկայացնում են *յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո*:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության որոշ տեսակների համար սահմանված են սահմանային չափեր, դրանք են՝

- հանրային սննդի գործունեության համար՝ եռամսյակի ընթացքում սպասարկման մակերեսի $1մ^2$ համար 200 հազար դրամ ապրանքաշրջանառության ծավալ,
- ավտոտեխսպասարկման գործունեության համար՝ ամսվա ընթացքում *մեկ աշխատատեղի համար 800 հազար դրամ* ապրանքաշրջանառության ծավալ.

Սահմանային չափը գերազանցելու դեպքում հաստատագրված վճար վճարողը սահմանային չափը գերազանցած ժամանակաշրջանի (եռամսյակի կամ ամսվա) համար հաշվարկվում է շահութահարկ (եկամտահարկ) և ավելացված արժեքի հարկ: Տվյալ ժամանակաշրջանի համար վճարված հաստատագրված վճարի գումարը պակասեցվում է:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության դադարեցման դեպքում վճարողը պարտավոր է գործունեության դադարեցման մասին նախապես գրավոր հայտնել հարկային տեսչությանը: Գործունեության դադարեցման մասին գրավոր չհայտնելու դեպքում հաստատագրված վճար կհաշվարկվի հարկային տեսչության կողմից՝ կիրառելով նախորդ ամսվա համար ներկայացված ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները:

ԾՆԱԽՈՏԻ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ, ԲԵՆՁԻՆԻ ԵՎ ԴԻՉԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաստատագրված վճարներ սահմանված են նաև ՀՀ ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի, ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար:

Հաստատագրված վճար վճարողներ են համարվում՝

- ՀՀ բենզինի և դիզելային վառելիք ներմուծողները
- ՀՀ ծխախոտի արտադրանք ներմուծողները և արտադրողները

1) Բենզինի (դիզելային վառելիքի) համար հաստատագրված վճարներ սահմանված են՝

- ներմուծման համար՝ որը փոխարինում է ԱԱՀ-ին և ակցիզային հարկին
- անմիջականորեն ներմուծողների կողմից իրացման համար՝ փոխարինում է շահութահարկին (եկամտահարկին):

Բենզին և դիզելային վառելիք ներմուծող և իրացնողները, տնտեսական գործունեության արդյունքներից անկախ, հաշվարկում և վճարում են հաստատագրված վճար հետևյալ չափերով՝

	ներմուծման մասով՝ յուրաքանչյուր 1 տոննայի համար	ՀՀ-ում իրացման մասով իրացումից հասույթի
բենզինի համար՝	112 հազ դրամ	1% բայց ոչ պակաս 1 տոննայի համար 2.5 հազար դրամ
դիզելային վառելիքի համար	32.5 հազար դրամ	1% բայց ոչ պակաս 1 տոննայի համար 1.5 հազար դրամ

2) Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարներ սահմանված են՝

- ներմուծման համար՝ որը փոխարինում է ԱԱՀ-ին (15%), ակցիզային հարկին (76.5%) և մաքսատուրքին (8.5%)
- ՀՀ-ում արտադրվող ծխախոտի համար՝ փոխարինում է ԱԱՀ-ին (20%) և ակցիզային հարկին (80%)

Տնտեսական գործունեության արդյունքներից անկախ, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը հաշվարկում և վճարում են հետևյալ չափերով՝

Ապրանքի ծածկագիրն ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ապրանքի անվանումը	Հաստատագրված վճարի չափը (դրամ 1,000 հատի համար)	
		Ներմուծվող արտադրանքի համար	ներքին արտադրության ապրանքի համար
2402 10 000 11	սիգարներ՝ ծխախոտ պարունակող	550000	300000
2402 90 000 11	սիգարներ՝ այլ		
2402 10 000 12	սիգարեղաններ՝ ծխախոտ պարունակող	15000	11000
2402 90 000 12	սիգարեղաններ՝ այլ		
2402 20 900 11	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, ֆիլտրով	6500	4750
2402 20 100 11	սիգարետներ՝ մեխակ պարունակող, ֆիլտրով		
2402 90 000 13	սիգարետներ՝ այլ, ֆիլտրով		
2402 20 900 12	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, առանց ֆիլտրի	3250	1950
2402 20 100 12	սիգարետներ՝ մեխակ պարունակող, առանց ֆիլտրի		

2402 90 000 14	սիզարեոներ՝ այլ առանց ֆ-իլտրի		
----------------	-------------------------------	--	--

Ծխախոտի արտադրանք ներմուծող քաղաքացիները հաստատագրված վճար վճարում են *400 հատ սիզարետը* և *10 հատ սիզարը* գերազանցող մասի համար:

Վճարումներ

Ծխախոտի, բենզինի կամ դիզելային վառելիքի ներմուծման դեպքում հաստատագրված վճարները վճարվում են ներմուծման պահին կամ սահմանված դեպքում՝ ներմուծման օրվանից՝ *10 օրվա ընթացքում*:

Բենզինի և դիզելային վառելիքի համար շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարները, ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարները վճարվում են *յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ*:

Բենզինի, դիզելային վառելիքի և ծխախոտի արտադրանքի իրացումը ազատված է ԱԱՀ-ից:

➤ **ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱԿԱՐԳ**

Արտոնագրային վճարները կիրառվում են 2009թվ. մարտի 1-ից, որը որոշակի գործունեություն իրականացնելու համար ֆիզիկական անձանց կողմից պետական բյուջե վճարվող պարտադիր և անհատույց վճար է:

Արտոնագրային վճարը փոխարինում է եկամտահարկին և ավելացված արժեքի հարկին:

Քաղաքացիներն *առանց պետական գրանցման* (առանց իրավաբանական անձ կազմավորելու կամ անհատ ձեռնարկատեր գրանցվելու) իրավունք ունեն գրադվելու ձեռնարկատիրական գործունեությանը, եթե հանդիսանում են արտոնագրային վճար վճարողներ:

Արտոնագրային վճար վճարողները

Արտոնագրային վճար վճարողներ են համարվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձինք, որոնց համախառն եկամուտը նախորդ տարվա ընթացքում չի գերազանցել *2,5 մլն դրամը*, և հարկային մարմին ներկայացրել են *դիմում-հայտարարություն* արտոնագրային վճար վճարող համարվելու մասին:

Արտոնագրային վճար վճարող համարվելու համար *գործունեության տեսակներն են՝*

1. *Բնակչության պատվերով կատարվող՝*
 - 1.1. կոշկեղենի և կաշվե այլ արտադրատեսակների արտադրություն և նորոգում,
 - 1.2. բնական և արհեստական կաշվից ճամփորդական և գալանտերեայի ապրանքատեսակների արտադրություն և նորոգում,
 - 1.3. հագուստի արտադրություն և նորոգում,

- 1.4. գլխարկների արտադրություն և նորոգում,
- 1.5. գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում,
- 1.6. հեծանիվների և այլ կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի արտադրություն և նորոգում,
- 1.7. գեղագարդ և տնտեսական խեցեգործական արտադրատեսակների արտադրություն,
- 1.8. ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություն,
- 1.9. բրուտագործական տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություն.

2. երաժշտական գործիքների, կենցաղային տեխնիկայի և (կամ) ժամացույցների նորոգում և տեխնիկական սպասարկում.

3. կար ու ձևի, հելունագործության դասավանդում.

4. լեզուների ուսուցման դասընթացներ.

5. բուհեր և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ, այլ վճարովի դասընթացներ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու համար.

6. սյարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն.

7. անկախ դերասանների գործունեություն՝ դրամատիկական դերասանների, ռեժիսորների, երաժիշտների, երգիչների, հեղինակների, սամունքողների, համերգավարների.

8. կերպարվեստանոցների գործունեություն (քանդակագործների, նկարիչների, ծաղրանկարիչների, փորագրողների, օֆորտանկարիչների, բեմի նախագծողների և ձևավորողների) գործունեություն.

9. սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն.

10. տնային տնտեսությունների վարում սպասարկու անձնակազմի կողմից (խոհարարներ, սպասուհիներ, մատուցողներ, ծառաներ, լվացարարուհիներ, այգեպաններ, դռնապաններ, ձիապաններ, վարորդներ, պահակներ, տնային դաստիարակչուհիներ, տնային ուսուցիչներ, քարտուղարներ, երթևեկ դայակներ և այլն).

11. դարբնոցային գործունեություն:

Արտոնագրային վճար վճարողները հարկային հաշիվներ դուրս չեն գրում և չեն հանդիսանում հարկային գործակալներ:

Արտոնագրային վճար չեն վճարում

Արտոնագրային վճար վճարողներ չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք, որոնք՝

- արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային տեսչությունն դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվան նախորդող օրացուցային տարվա որևէ պահի դրությամբ *հանդիսացել են անհատ ձեռնարկատերեր*.
- իրենց գործունեության իրականացման համար օգտագործում են այլ անձանց աշխատուժը կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական այլ անձանց վճարովի ծառայությունները (աշխատանքները):

Դիմում-հայտարարության ներկայացման կարգն ու ժամկետները

Տվյալ տարում արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարությունը ֆիզիկական անձինք ներկայացնում են իրենց հաշվառման՝ բնակության կամ գործունեության իրականացման վայրի հարկային տեսչություն:

Դիմում-հայտարարությունը ներկայացվում է մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը *ներառյալ*՝ տարվա կամ 1-ին կիսամյակի համար: 2-րդ կիսամյակի համար դիմում-հայտարարություն կարող է ներկայացվել հուլիսի 31-ից ոչ ուշ: Իսկ տարվա ընթացքում որևէ ամսից մինչև տվյալ տարվա վերջը արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն կարող են ներկայացնել տվյալ ամսվա վերջին օրվանից ոչ ուշ:

Վճարի չափը

Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի տարեկան չափը սահմանվում է՝

Գործունեության իրականացման վայրը	Արտոնագրային վճարի չափը, հազար դրամ		
	տարվա համար	կիսամյակի համար	ոչ լրիվ կիսամյակի կամ կիսամյակը գերազանցող ոչ լրիվ տարվա համար
Երևան քաղաքում	60.0	30.0	60/12*Աթ
մարզկենտրոններում՝	30.0	15.0	30/12*Աթ
այլ քաղաքներում և Երևան քաղաքի վարչական սահմաններից մինչև 20 կմ - հեռավորության վրա գտնվող բնակավայրերում՝	24.0	12.0	24/12*Աթ
հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում	3.6	1.8	3.6/12*Աթ
այլ վայրերում՝	12.0	6.0	12/12*Աթ

Աթ - ոչ լրիվ կիսամյակի կամ կիսամյակը գերազանցող ոչ լրիվ տարվա համար արտոնագրային վճար վճարող համարվելու ամիսների թիվն է:

Մեկից ավելի գործունեության տեսակներ իրականացնելու համար երկրորդ և հաջորդ յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է նշված չափերի 50 տոկոսի չափով:

Արտոնագրային վճար վճարողները կարող են հարկային մարմին ներկայացնել դիմում պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները կատարելու մասին: Այդ դեպքում արտոնագրային վճար վճարողները վճարում են նաև անհատ ձեռնարկատերերի համար սահմանված ամսական նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարը՝ 5000 դրամի չափով: Արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածը համարվում է ապահովագրական ստաժ:

➤ **Միջազգային համաձայնագրեր**

Համաձայն միջազգային հարկային գործող համաձայնագրերի, ոչ ռեզիդենտների կողմից ստացված շահաբաժիններից, տոկոսներից և ռոյալթիներից հարկերը սահմանվում են ներոնշյալ աղյուսակով ներկայացված դրույքաչափերով:

<i>N</i>	<i>Ռեզիդենտության երկիրը</i>	<i>Շահաբաժին (%)</i>	<i>Տոկոս (%)</i>	<i>Ռոյալթի (%)</i>
1	Ավստրիա	5 ¹ /15	10	5
2	Բելառուս	10 ² /15	10 ⁸	10
3	Բելգիա	15 ¹ /15	10 ⁸	8
4	Բուլղարիա	5 ³ /10	10 ⁸	10
5	Կանադա	5 ⁴ /15	10 ⁸	10
6	Չինաստան	5 ⁵ /10	10 ⁸	10
7	Էստոնիա	5 ⁵ /15	10 ⁸	10
8	Ֆրանսիա	5 ¹ /15	10 ⁸	5 ⁹ /10
9	Ֆինլանդիա	5 ⁵ /15	5 ⁸	5/10
10	Վրաստան	5 ⁵ /10	10	5
11	Հունաստան	10	10	5
12	Հնդկաստան	10	10 ⁸	10
13	Ինդոնեզիա	10 ⁶ /15	10	10
14	Իրան	10 ⁶ /15	10 ⁸	5
15	Իտալիա	5 ⁴ /10	10 ⁸	7
16	Լատվիա	5 ⁵ /15	10 ⁸	10
17	Լիբանան	5 ⁵ /10	8 ⁸	5
18	Լիտվա	5 ⁵ /15	10 ⁸	10
19	Մոլդովա	5 ⁵ /15	10	10
20	Լեհաստան	10	5	10
21	Կատար	5 ⁴ /10	5	5
22	Ռումինիա	5 ⁵ /10	10 ⁸	10
23	Ռուսաստան	5 ³ /10	-	-
24	Շվեյցարիա	5 ⁷ /15	10	5
25	Սիրիա	10	10	12
26	Թաիլանդ	10	10	15
27	Նիդեռլանդներ	5 ¹ /15	5	5
28	Թուրքմենստան	5 ⁵ /15	10	10
29	ԱՄԷ	3	-	5
30	Ուկրաինա	5 ⁵ /15	10 ⁸	-

¹ Շահաբաժինների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերությունում կազմում է կանոնադրական կապիտալի 10%:

² Շահաբաժինների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերությունում կազմում է կանոնադրական կապիտալի 30% :

³ Շահաբաժինների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 40.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

⁴ Շահաբաժինների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

⁵ Շահաբաժինների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերությունում կազմում է կանոնադրական կապիտալի 25% :

⁶ Շահաբաժինների հարկման 10% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերությունում կազմում է կանոնադրական կապիտալի 25% :

⁷ Շահաբաժինների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժին ստացող անձի մասնակցությունը շահաբաժիններ վճարող ընկերությունում կազմում է կանոնադրական կապիտալի 25% և օտարերկրյա ներդրված կապիտալը շահաբաժինների ստացման պահին գերազանցում են 200.000 հազար շվեյցարական ֆրանկը կամ դրան համարժեք որևէ այլ տարադրամը::

8 Նախատեսված են որոշակի սահմանափակումներ աղբյուր պետությունում հարկը գանձելու համար:

9 Ռոյալթիների հարկման 5% դրույքաչափը կիրառվում է հեղինակային իրավունքների դեպքում, իսկ մնացած դեպքերում՝ 10%: